ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԹԻՎ 16 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ

375069 ք.Երևան Դրոյի -17
հեռ. 24-00-23

МЭРИЯ г.ЕРЕВАНА
<ПОЛИКЛИНИКА N16> ЗАО

375069 г. Ереван ул. Дро-17
тел. 24-00-23

N___529_____

«31» 01 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/4)-14/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ, ք, Երևան, Դրոյի 17, 28 սենյակ հասցեով, Գ. Վարդանյանին (հեռ. 010 24-58-01), մինչև 2014թ. փետրվարի 11-ը, ժամը 14:00-ը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքում, ք, Երևան, Դրոյի 17 հասցում, 28 սենյակում, 2014թ. փետրվարի 11-ին, ժամը 14:00-ին:

Գնման առարկա է Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա:

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված դեղորայքի և պատվաստանյութերի այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջակվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՏՆՕՐԵՆ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ
N ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/4)-14/1

ք. Երևան "……" ……………. 2014թ.

Երևանի «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի Մ. Ստեփանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և "………………..."-ն, ի դեմս տնօրեն ……………ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

## 1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին:
2.2 Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1. Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատճաշ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե գնորդը վաճառողի կողմից պարտականությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանք այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատճաշ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետներում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջին վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է՝ ................... (.................................) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N 1 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Ապրանքը Գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող ամսում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար: Ապրանքի պիտանելիության ժամկետին ներկայացվող պահանջները ներկայացված են հավելված 1-ում:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 2) և Ապրանքի ծեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ծեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ,

ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված ՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան Համաձայնագրի կնքման հիման վրա:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում Ապրանքի մատակարարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանարի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

փոխհատուցե իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը

- սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգովորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է ........... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածները՝ բաղկացած ....... էջից, հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունք:

## 10. ԿՈՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

ք, Երևան, Դրոյի փ., 17 շենք,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» «Զեյթուն» մ/ճ
Հ/Հ 163518008509
ՀՎՀՀ 00878075

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1
“......” ................ 2014թ. կնքված
N ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/4)-14/1
ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երևանի «Թիվ 16 Պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի գնման

| Ապրանքի* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | **անվանումը** | **տեխնիկական բնութագիրը (հատկանիշները)** | **Չափի միավորը** | **Առավելագույն քանակը** | **դիմաց վճարման ժամկետը** | **մատակարարման վայրը** |
| 1. | Դիկլոֆենակ | Նատրիումի դիկլոֆենակ 100մգ*10 | դեղահատ | 2400 | Ապրանքը Գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող ամսում | Թիվ 16 պոլիկլինիկա, ք, Երևան, Դրոյի 17 |
| 2. | Դիկլոֆենակ | Ներարկման լուծույթ 75մգ/3մլ | Սրվակ | 120 | | |
| 3. | վերապամիլ | 80մգ*30 | հատ | 1800 | | |
| 4. | դիգօքսին | 0.25*50 | Դեղահատ | 100 | | |
| 5. | Մետապրոլոլ ռետարդ | 50մգ*30 | Դեղահատ | 3000 | | |
| 6. | Կարվեդիլոլ | 25մգ (30/3x10/) | Դեղահատ | 7000 | | |
| 7. | Բիպրոլ | Բիսոպրոլոլ 10մգ *30 | Դեղահատ | 6000 | | |
| 8. | Կոնկոր 5մգ | 5մգ*50 բիսոպրոլոլի հեմիֆումարատ | Դեղահատ | 720 | | |
| 9. | Դիլթիազեմ 90մգ | 90մգ*21 դիլթիազեմ ռետարդ | Դեղահատ | 500 | | |
| 10. | Կորինֆար | 10մգ*100 նիֆեդիպին 10 մգ | Դեղահատ | 600 | | |
| 11. | Կարդիոմագնիլ | 150մգ*100 թաղանթապատ դեղահատ | Դեղահատ | 10 000 | | |
| 12. | Ամլոդիպին 10մգ | 10մգ*30 | Դեղահատ | 7800 | | |
| 13. | Էնալապրիլ H 10մգ/25մգ | 2*10 բլիստերում էնալապրիլ 10մգ հիդրոքլորտիազիդ 25մգ | Դեղահատ | 6000 | | |
| 14. | Պրեդուկտալ MR | 35 մգ*60 տրիմետազիդինի հիդրոքլորիդ թաղանթապատ | Դեղահատ | 12 000 | | |
| 15. | Վերոշպիրոն | 25մգ*20 աստիճանաբար ձերբազատվող հաբ սպիրոնոլակտոն | Դեղահատ | 2400 | | |
| 16. | Սալբուտամոլի ցողացիր 100մգ | 100մգ դեղաչափ ալյումինե տարայում դեղաչափիչ մխոցով | Հատ | 100 | | |
| 17. | Սալբուտամոլ 2մգ | 2մգ*24 | Դեղահատ | 1440 | | |
| 18. | Էուֆիլլին 150 մգ | 150մգ*30 | Դեղահատ | 200 | | |
| 19. | Կալցիում+վիտամին D3(500/200) | Թաղանթապատ կալցիում 500/vitD3-200x100 | Դեղահատ | 2000 | | |
| 20. | Կալցիում D3 | Կալցիում 500+վիտամին D3200 ծամվող | Դեղահատ | 3000 | | |
| 21. | Մեթիպրեդ | Մեթիլպրեդնի զոլոն 4մգx30 | Դեղահատ | 5100 | | |
| 22. | Տամօքսիֆեն 20mg | տամօքսիֆենի ցիտրատ 20մգx30 | Դեղահատ | 2400 | | |
| 23. | Ցետիրիզինի հիդրոքլորիդ | 10մգx7 | Դեղահատ | 84 | | |
| 24. | Թիմոլոլ օֆտան | 5մգ/մլ-10մլակնակաթիլ | Շշիկ | 12 | | |
| 25. | Կատաքրոմ օֆտան | Ակնակաթիլ | Շշիկ | 12 | | |
| 26. | Լթիրօքսին 100մգ | 100մկգx100 | Դեղահատ | 1200 | | |
| 27. | Էութիրոքս | 75մկգ | Դեղահատ | 400 | | |
| 28. | Օմեպրազոլ 20մգ | 20մգx30 | Պատիճ | 600 | | |
| 29. | Պանզինորմ ֆորտե | Ֆերմենտների հավաքածու | Պատիճ | 600 | | |
| 30. | Ֆեզամ կամ համարժեք | 400մգ պիրացետամ 25մգ Ցինարիզին | Դեղահատ | 5000 | | |
| 31. | Տրոպիկամիդ | Ակնակաթիլ 1%-10մլ | Շշիկ | 6 | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 32. | Տրիտացե 10 մգ | Ռամիպրիլ 10մգx28 | Դեղահատ | 7200 | | |
| 33. | Ցեֆտրիաքսոն | Ցեֆտրիաքսոն 1գ դեղափոշի ներարկման լուծույթ ստանալու համար | Շշիկ | 100 | | |
| 34. | Էսալիվեր ֆորտե | Էսենցիալ ֆոս ֆոլիպիդներ 300մգ+Bխմբի E, PP վիտամիններ 3x10 | Դեղապատիճ | 1000 | Ապրանքը Գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող ամսում | Թիվ 16 պոլիկլինիկա, ք, Երևան, Դրոյի 17 |
| 35. | Պրիլամիդ | Պերինդոպրիլ էրբումին 4 մգ և ինդապամիդ 1,25մգN30 | Դեղահատ | 1500 | | |
| 36. | Դետրալեքս | 500մգx60 | Դեղահատ | 600 | | |
| 37. | Տրամադոլ | Ներարկման լուծույթ 100մգ/2մլ | Սրվակ | 200 | | |
| 38. | Տրամադոլ | 50մգx20 | Դեղապատիճ | 200 | | |
| 39. | դիազեպամ | 5մգx | Դեղահատ | 200 | | |
| 40. | Իբուպրոֆենի օշարակ | Իբուպրոֆեն 100մգ/5մլ-100մլ | Շշիկ | 240 | | |
| 41. | Դրապոլենի քսուկ | 55գրամանոց պարկուճ | պարկուճ | 200 | | |
| 42. | Ակվադետրիմ | Խոլեկալցիֆերոլի ջրային լուծույթ 1կաթիլ=500մմ | Շշիկ | 600 | | |
| 43. | Նազիվին 0.01% | Օքսիմեթազոլինի հիդրոքլորիդ 0.01%-5.0մլ | Շշիկ | 120 | | |
| 44. | Նազիվին 0.025% | Օքսիմեթազոլինի հիդրոքլորիդ 0,025%-10,0 | Շշիկ | 120 | | |
| 45. | Ցեվիկապ | Վիտամին C լուծույթ 100մգ/մլ-10մլ | Շշիկ | 120 | | |
| 46. | Պիկովիտի օշարակ | Պոլիվիտամինային կոմպլեքս 150,0մլ | Շշիկ | 300 | | |
| 47. | Աուգմենտին 228 | Ամոքսիցիլին+կալիումի կլավուլանատ 228մգ/5մլ-70մլ | Շշիկ | 72 | | |
| 48. | Աուգմենտին 457 | Ամօքսիցիլին+կալիումի կլավուլանատ-457մգ/5մլ-70մլ | Շշիկ | 60 | | |
| 49. | Սուլֆապրիմ-սուսպենզիա | Սուլֆոմետոքսազոլ-200 տրիմետոպրիմ 40 | Շշիկ | 48 | | |
| 50. | Լինեքս | Լիոֆիլացված բակտերիաներ N16 | Դեղապատիճ | 2880 | | |
| 51. | Պուրօքսանի օշարակ | Դոքսոֆիլին 2%-100մլ | Շշիկ | 36 | | |
| 52. | Բրովինի օշարակ | Լեվոդրոպրոպիզին 0.6%-60,0 | Շշիկ | 36 | | |
| 53. | Պրոսպանի օշարակ | Բաղեղի տերևների չոր էքստրակտ 5-7,5:1 | Շշիկ | 36 | | |
| 54. | Մակրոպենի օշարակ | Միդեկամիցին 175մգ/5մլ-115մլ | Շշիկ | 36 | | |
| 55. | Հելմինտոքսի օշարակ | Պիրանտելի սուսպենզիա 15մլ | Շշիկ | 50 | | |
| 56. | Հելմինտոքս | Պիրանտել 6x125մգ | Դեղահատ | 96 | | |
| 57. | Բակտոքս սուսպ | Ամոքսացիլին 125մգ/5մլ | Շշիկ | 50 | | |
| 58. | Ֆլյուիֆորտ օշարակ | Կարբոցիստեինի լիզինային աղ 3գ/100մլ-40մլ | Շշիկ | 36 | | |
| 59. | Ֆլեմոկլավ | Ամօքսիցիլին 250մգ,, կլավուլանատ. 62.5 մգ տարրալուծվող | Հաբ | 1000 | | |
| 60. | Ֆլեմօքսին | Ամօքսիցիլին 250մգ տարրալուծվող հաբ | Դեղահատ | 1000 | | |
| 61. | Ազիտրոմիցինի սուսպենզիա | 200մգ-5մլ/20մլ-ապակե տարայով և չափիչ գդալով | Շշիկ | 60 | | |
| 62. | Իբուպրոֆեն | 100մգx10 | Դեղահատ | 2800 | | |
| 63. | Պարացետամոլ | 0.5x10 | Դեղահատ | 2800 | | |
| 64. | Նո-շպա | Դրոտավերին 40մգx20 | Դեղահատ | 3000 | | |
| 65. | Կատվախոտի ոգեթուրմ | 30մլ | Շշիկ | 15 | | |
| 66. | Կատվախոտի հանուկ | 0.02x50 | Դեղահատ | 4200 | | |
| 67. | Անուշադրի սպիրտ | Ամոնիակ 10%-50մլ | Շշիկ | 12 | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 68. | Տրախիսանի լոզաններ | Թիրոթրիցին 0.5մգ քլորհեքսիդին 1մգ լիդոկային 1մգ | Դեղահատ | 400 | Ապրանքը Գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող ամսում | Թիվ 16 պոլիկլինիկա, ք, Երևան, Դրոյի 17 |
| 69. | Ինֆլուցիդ | Ինտերֆերոնի բնական ինդուկտոր /հոմեոպաթայ./միջոցի | Դեղահատ | 1440 | | |
| 70. | Ֆենիստիլի կաթիլներ | Դիմետինդենի մալեատ 1մգ/մլ-20մլ | Շշիկ | 100 | | |
| 71. | Օտիռեալաքս | Ականջակաթիլ 40մգ/գ-15մլ պլաստիկե շշիկ | Շշիկ | 24 | | |
| 72. | Ֆերում-լեկի օշարակ | Երկաթի հիդրօքսիդ պոլիմալթազայով օշարակ 50մգ/5մլ-100մլ | Շշիկ | 36 | | |
| 73. | Էրիուս | Դեսլորատադին 5մգx10 տուփում | դեղահատ | 120 | | |
| 74. | Դյուֆալակ | Լակտուլոզ 667մգ/մլ-1000մլ պլաստիկ տարա | Հատ | 12 | | |
| 75. | Տրոքսեվազինի դոնդող | Տրոքսեռուտին 20մգ/գ. 40գ պարկուճ | Պարկուճ | 40 | | |
| 76. | Հեպարինի քսուկ | Հեպարինի քսուկ 25գ ալյումինե պարկուճ | Պարկուճ | 12 | | |
| 77. | Բետադին 10% | Բետադին 10%-0.5լ | Շշիկ | 8 | | |
| 78. | Ադամանդյա կանաչ | 1%-15մլ ապակյա շշիկ | Հատ | 12 | | |
| 79. | Յոդի 5% լուծույթ | 5%-500մլ | Շշիկ | 6 | | |
| 80. | Լեվոմեկոլի քսուկ | 40գ-անոց պարկուճ | Պարկուճ | 20 | | |
| 81. | Անեսթեզինի քսուկ | Անեսթեզինի քսուկ, 25գ. | Պարկուճ | 10 | | |
| 82. | Ցինկի քսուկ | 1%-25գ 100մգ/գ ցինկի օքսիդ | Պարկուճ | 10 | | |
| 83. | Նովոկայինի լուծույթ | 2%-2մլ-10հատ 1 տուփում | Սրվակ | 600 | | |
| 84. | Ֆուրացիլինի քսուկ | Ֆուրացիլինի քսուկ, 2%-25գ | Պարկուճ | 24 | | |
| 85. | Հակակատաղության վակցինա | Պատվաստանյութ տուփի մեջ 5 կոմպլեկտ չոր նյութ և լուծիչ | Սրվակ | 40 | | |
| 86. | Հակափայտացման անատոքսին /AC/ | Տուփի մեջ 10 սրվակ | Սրվակ | 150 | | |
| 87. | Ֆուրացիլլին | Անտիսեպտիկ լուծույթի պատրաստման համար | Դեղահատ | 500 | | |
| 88. | Ռեհիդրոն | Աղային խարնուրդ 18.9գ փաթեթիկ | Հատ | 200 | | |
| 89. | Կրեոն 10 000 | Ֆերմենտների կոմպլեքս | Դեղապատիճ | 1000 | | |
| 90. | Ինեստոմ | Լեվոկարնիտինի լուծույթ 1գ/10մլ | Շշիկ | 60 | | |
| 91. | Լակտո G | Լիոֆիլացված կենդանի բակտերիաններ տուփում 10 հատ | Դեղապատիճ | 1000 | | |
| 92. | Ֆուրոսեմիդ | 40մգ | Դեղահատ | 300 | | |
| | **Մատակարարման պայմանները և ժամկետը՝** | **Մատակարարման պայմանները**՝ Մատակարարումներն իրականացվում են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:<br>** Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը և դրանց պրեկուրսորների մատակարարումը՝ բաշխումը կատարվում է դեղատներից, «Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 270-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ դեղատան հասցեն նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:*<br>**Մատակարարման ժամկետը**՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված յուրաքանչյուր ամիս՝ըստ պատվիրատուի կողմից սահմանված քանակների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակասլ լինել 31 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի տրմանը հաջորդող 5 օրվա ընթացքում: | | | | |
| | **Պիտանելիության ժամկետը** | դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝<br>ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,<br>բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,<br>գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ | | | | |

| | | |
|---|---|---|
| | | ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը: |
| | Այլ պայմաններ | **Տեխնիկական բնութագրերում ֆիրմային նշանին, արտադրողին և ծագման երկրին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:** ***Մասնակիցը հայտով ներկայացնում է որպես համարժեք առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք ապրանքի դեպքում՝ առաջարկվում է համարժեք դեղի անվանումը և ծագման երկիրը:*** |

** Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է վաճառողը:*

*** Դեղերի պահպանման և տեղափոխման պայմանները՝ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» N 17-Ն հրամանով սահմանված պահանջների համաձայն:*

ԳՆՈՐԴ
ք, Երևան, Դրոյի փ., 17 շենք,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» «Զեյթուն» մ/ճ
Հ/Հ 163518008509
ՀՎՀՀ 00878075

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
“......” ..... .... .............. 2014թ. Կնքված
N ԵԹԻՎ16Պ- ՇՀԱՊՁԲ-(11/4)-14/1
ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու

hասցե___________________________
hh_______________________________

hվhh_____________________________

Կատարող

hասցե___________________________
hh_______________________________

hվhh_____________________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«__» «_________» 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____________________ » :

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ » «_____________» 2014թ.

Պայմանագրի համարը՝ ___________

Պատվիրատուն, ի դեմս_______________________________________________ և Կատարողն՝ ի դեմս________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «__» «_________» 2014թ-ից «__» «_________» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

(ստորագրություն)

ազգանուն_________________

Կ.Տ

Աշխատանքը ընդունեց

(ստորագրություն)

ազգանուն_________________

Կ.Տ